«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՀՀ.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +374-41-777-983
Էլ. հասցե՝easm.himnark@gmail.com

«20» օգոստոսի 2025թ.

«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

/Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 70/22/

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
(Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

2025 թվականի մարտի 11-ին «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (այսուհետ՝ Գնորդ) և «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊ ընկերության դեմս տնօրեն Արթուր Սաֆարյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքված հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը պայմանագրով Գնորդին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզել է, որ սահմանված ժամկետներում Վաճառողը չի ապահովել ապրանքի մատակարարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը հաշվի առնելով այն հանգամանքը, որ 11.03.2025 թվականին կնքված հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի շրջանակներում նախատեսված ապրանքները «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊ ընկերության կողմից մատակարարման ժամանակացույցի պահանջներին համապատասխան չեն մատակարարվել, ուստի 31.07.2025թ. ընկերությանն է հասցեագրվել գրություն՝ առաջարկելով մինչև սույն թվականի օգոստոսի 10-ը մատակարարել մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանքները:

Նշված գրությանը վերջինիս կողմից 11.08.2025թ. տրվել է պատասխան, որ «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ն ձեռք է բերել անհրաժեշտ խմբաքանակը, որը պատրաստ է մատակարարել, հայցել է ընտրել ժամանակ ապրանքի մատակարարման համար:

13.08.2025 թվականին «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ 2-րդ եռամսյակում հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի չմատակարարված ապրանքների խմբաքանակը կարող է մատակարարել սույն թվականի օգոստոսի 14-ին, միաժամանակ հայցվել է ներկայացնել մատակարարվող ապրանքների իսկությունը հավաստող փաստաթղթերը, այնինչ «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի կողմից ամբողջությամբ չի մատակարարվել մատակարարման ժամանակացույցով մատակարարման ենթակա ապրանքների քանակը, վերջինիս կողմից մատակարարվել է ընդամենը 6 տարա 80W90 տեսակի փոխանցման տուփի յուղ՝ 1248 լիտրի չափով, որոնք չեն համապատասխանել հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի ապրանքի տեխնիկական բնութագրի պահանջներին, չեն ներկայացվել տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքի հանձնման ժամանակ պահանջվող սերտիֆիկատը՝ արտադրող երկրի և կազմակերպության, որակի վերաբերյալ, ինչպես նաև ներմուծման և միջազգային ստանդարտներին համապատասխան փաստաթղթերը:

Արդյունքում հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրով նախատեսված ժամկետներում «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի օգոստոսի 20-ի դրությամբ չեն մատակարարվել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ մասնակի (25.325,340 ՀՀ դրամի չափով) լուծում է պայմանագիրը՝ *պակշած ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ

դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերերդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման ապահովման համար սահմանված գումարները՝ համապատասխանաբար 7.368.000 (յոթ միլիոն երեք հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ և 11.052.000 (տասնմեկ միլիոն հիսուն երկու հազար) ՀՀ դրամ Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված՝ համապատասխանաբար «900008000664» և «900008000698» գանձապետական հաշվեհամարներին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ

ՍԱՇԱ ԿԱՏՎԱԼՅԱՆ